Գաղջանցն էլ, առ ժամանակ լաւ համարեց հեռանալը։ Պլսեցին՝ իր զայֆէաուներից ժողոված տաճկերէն և յունարէն զգրուցարարութիւնները որպէս երգարան և քերականութիւն աղքատ աշակերտների վրա սաղացնելով և իր երկու անսէյ առձիկը տանելով է պարապված։

Մնացին Ա. ուսուցիչը, վարենացած աշակերտները, անփոյթ և աղքանց դարձած դասատուները։ Իսկ ամենից աւելի խորը նստած—բարոյապէս մնած և սարկացած ժողովուրդը—նախկինացին։

* * *

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Ալէքսանդրապոլի Արզուհեան օրիորդաց դպրոցի աշակերտուհիները նուիրել են յօգուտ Վանի սովատանջների 73 ր. 70 կ. գումարը։

Ազէքսանդրեանց տիրուհի 1 ր., Ազէքսանդրեանց Զարուհի 1 ր., Ազէքսանդրեանց Հայկանոյշ 1 ր., Ազասխաչեանց Զարուհի 1., Դանիէլեանց Թեկղի 1 ր., Դրմբեանց Ջաւահիր 1 ր., Խաչատկեանց Գէնովֆիէ 1 ր., Խաչատկեանց Շուշանիկ 1 ր., Կոստանեանց Մարիամ 1 ր., Զիմզոդեանց Կատարինէ 3 ր., Վասաբեանց Շուշանիկ 1 ր., Մնացականեանց Զարուհի 40 կ., Սարգսեանց Թագուհի 1 ր., Սահրատեանց Երանուհի 1 ր., Սահրատեանց Սալուէմ 1 ր., Վարդանեանց Հռոփսիմէ 1 ր., Տէր-Գաբրիէլեանց Երանուհի 1 ր., Տէր-Յակոբեանց Վարսենիկ 1 ր., Տէր-Պետրոսեանց Անոյշ 1 ր., Թուխկեանց Ցիրուհի 1 ր., Վասապեանց Եւգենիա 2 ր., Սանոյեանց Ովսաննա 1 ր., Մատոյեանց Փառանձէմ 1 ր., Զուէշլիեանց Եղիսաբէթ 50 կ., Մովսէսեանց Շողակաթ 50 կ., Յարդիեանց Վերոնիքա 2 ր., Աղաջանեանց Մարգարիտ 1 ր., Միրզոյեանց Սօֆիա 3 ր., Մովսէսեանց Գայիանէ 1 ր., Խանանուչեանց Մարգարիտ 1 ր., Ամիսեանց Եսթեր 2 ր., Գեանդարեանց Կատարինէ 1 ր., Մուշեղեանց Ցուրիի 1 ր., Սահակեանց Եփիմիա 1 ր., Աւետիսեանց Զարուհի 1 ր., Խրխրեանց Մարգարիտ 1 ր., Մուշեղեանց Թագուհի 1 ր., Մովսէսեանց Գայիանէ 1 ր., Սոսոյեանց Հռոփսիմէ 1 ր., Արարատեանց Վարսենիկ 20 կ., Աւետիսեանց Ցիրուհի 50 կ., Աբրահամեանց Ցարիթա 1 ր., Ատոյեանց Շուշանիկ 20 կ., Բարսեղեան Զարէլ 1 ր., Բէգլարեանց Վարսէնիկ 3 կ., Բուդումեանց Շուշանիկ 50 կ., Բարսամեանց Եւգենիա 1 ր., Բաղրամեանց Շուշանիկ 1 ր., Բաղրամեանց Ցուրիի 1 ր., Բաղրամեանց Մարգարիտ 1 ր., Գրիգորեանց Շուշանիկ 2 ր., Գրիգորեանց Հեղինէ 2 ր., Գրիգորեանց Սաթենիկ 2 ր., Թաշարեանց Թոսրոմեաղուտ 80 կ., Կարապետեանց Թագուհի 20 կ., Կարապետեանց Սալվինար 1 ր., Կարապետեանց Զարդալամ 20 կ., Կոստանեանց Եւգինէ 1 ր., Մխիթարեանց Կատարինէ 20 կ., Մխիթարեանց Մագդալինէ 1 ր., Մկրտչեանց Գայանէ 1 ր., Արուսեակ Մկրտումեանց 50 կ., Փեփրոնեան Կորանեանց 1 ր., Շահնազարեանց Եղիսաբէթ 50 կ., Զմկեանց Հայկանոյշ 50 կ., Պալասանեանց Շուշանիկ 5 կ., Սանոյեանց Հռոփսիմէ 1 ր., Սանոյեանց Մարգարիտ 1 ր., Վարդապարիկեանց Թանում 2 կ., Վարդապարիկեանց Վարդանուշ 1 ր., Տիգրանեան Եղիսաբէթ 60 կ., Տիգրանեանց Հայկանուշ 1 ր., Տէր-Աւագեանց Մարգարիտ 10 կ., Ուռարեանց Վարդանի 1 ր., Փալչեանեանց Թանում 30 կ., Գալստեանց Մարգարիտ 1 ր., Հովհաննէսեանց Հայկուհի 40 կ., Աղասխաչեանց Թագուհի 50 կ. Ընդամենը 73 բուբլի և 70 կոպէկ։

Արիստոդամ Յովհաննէսեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՈՒ

—

11 յունիսի

Կասպից ծովի նաւագնացութիւնը (навигація) բացվելուց յետ Թանգութիւնը Բաղուում օրեցօր մեղմանում է։ Այժմ մեր վաճառականներից յաւելը Ռուսաստանից բերել տուած ունեն ալիւրի մեծ քանակութիւն։ Պէտք է ասած, որ իսկապէս այս տարի Բաղուում հացի Թանգութիւնը այնքան սարսափելի չէր, եթէ հանեմատենք Կովխան ուրիշ քաղաքներում տիրող Թանգութեան հետ։ Սարանով մենք մեծ մասամբ պարտական ենք մեր քաղաքային վարչութեան, որը ամենայն կերպ աշխատել է և աշխատում է նպաստել կենսական գնդէ ամենաանհրաժեշտ պահանջների էժանութեանը։ Նոյն իսկ Թանգութիւնը սկսած օրից քաղաքային վարչութիւնը մի առանձին ուշադրութիւն դարձրեց ժողովրդի ազքատ դասի դրութեան վրա։ Նա իր միջից կազմելով մի յանձնաժողով յանձնեց Նորան քաղաքային գանձից մի նշանաւոր գումար, (կարծում մտ 50,000 ր.), որը յանձնաժողովը պիտի գործ ածէր ժողովրդի համար էժան գնով հաց մատակարարելու։ Նպատակով շնորհակալութեան արժանի են այդ յանձնաժողովի անդամները իրանց ցոյց տուած անխոնջ աշխատութիւններով, մանաւանդ պարոնի Հաջի Զէյնալ Թաղիովը, որը թէ իր սեպհական գումարով և թէ իր ձեռքով ժողոված նուիրատուութիւններով ամենայն կերպ աշխատում էր պաշտպանել մեր աղքատ դասը Թանգութեան հարուածների դէմ։

Գաւառներից եկողների ասելով, այս տարի Բաղուի նահանգում հունձքը պէտք է չատ առատ լինի, նաև առաւել Շամախու և Ղուբի գաւառներում, ուր գարնանը առատ անձրևներ են եկել։ Երանի թէ այդպէս լինի, օրովհետև այս երկու գաւառների բնակիչները ամենաազքատ լինելով, այս տարի ամենից առաւել նեղութիւններ կրեցին հացի կողմից։ Անցեալ ձմեռը Շամախու գաւառում, ինչպէս տեղեկանում ենք այնտեղից ստացած մասնաւոր նամակներից, Թանգութիւնը և աղքատութիւնը այնտեղ հասցրին խեղճ բնակիչներին, որ նոյնանից չատ ընտանիքներ երկու երեք օրով ուտելու հաց չէին գտնում, մինչև տէրութեան կողմից օգնութիւն հասնելը։ Պատմում են թէ, մինչև անգամ այդ գաւառի չեմ յիշում որ գիշերում պատահել են սովից մեռնողներ։

Անցեալ կիրակի, մայիսի 25-ին, Բաղուի «Մարդասիրական ընկերութիւնը» տանից իր գոյութեան տասն և վեցերորդ տարեդարձը։ Նոյն օրը մայր եկեղեցում պաւարարդից յետոյ կատարեցին հանգուցեալ Կայսրուհու Հոգեհանգիստը և «Մարդասիրական ընկերութեան» համար մաղթանք, որից յետոյ հանդիսականները հայր Բուրգանովի տրարանը գնացին ընկերութեան գանձիը, ուր պիտի կատարվէր տարեդարձի հանդէսը և որը գեղեցիկ կերպով զարդարված էր։ Այդտեղ ներկայ էին բացի ընկերութեան անդամներից, հայոց երկսեռ գպրոցի վարժապետներից և ուսանողներից բաւական հանդիսականներ, որոնցից ամէն մէկը ըստացաւ հանդէսի պրոգրամման, որի համեմատ աշակերտները և աշակերտուհիները պիտի մի քանի ազգային երգեր երգէին, ուսանողներ ասէին և այլն։ Կայսրուհու մահուան պատճառով երգեցողութիւն չեղաւ, իսկ աշակերտներից մի քանիսը ասացին մի քանի ուսանողներ բաւական յաջող կերպով։ Բայց մի բան, որ ամենից հետաքրքրեցին էր այդ գպրոցի վարժապետներից մէկը, այն է պ. Ա. Գրիգորեանի (Սոխակի հրատարակչի) երկար ու անհամ ճառաբանութիւնն էր, որը ոչինչ զգեցրեց խեղճ հանդիսականներին, որ նոյնանից չատերը և այն էլ բանիմացները չը սպասելով ճառի վերջանալուն, ակամէները խիտ դուրս գնացին դահլիճից։ Հաճի Նիւմն էր գլխաւորապէս «Մարդասիրական ընկերութիւնը», որի վերաբերմամբ պ. Գրիգորեանը Աբուլիսի 75 մանէթանոց քարոզի նման չատ բաներ ասաց, բայց ոչինչ չասաց, բացի երկար ու բարակ գովասանքներից, որ թափում էր նա ընկերութեան անդամների գլխին։ Մենք ցարմանում ենք թէ պ. Գրիգորեանը «Մ. ընկերութեան» ինչն էր ոչնչան գովում, արդեօք այն, որ Նորա որգեգիրներից մէկը չը կարողանալով Ռուսաստանում քաղցած փորով չարունակել իր ուսումը, որոշեան նրա թոչակը ամիսներով ուշացնում էին, վերջապէս նորերումս ինչն է անձամբ եկել Բաղու, որ փող ստանայ։ Մի այսպիսի ընկերութիւն պատարակելու է արժանի իր թուլութեամբ։ Բայց այստեղ դժուար է խաբել Բաղուի հասարակութիւնը դարձակ ֆրազներով, որովհետև նա արդէն ճանաչել է «Մարդասիրական ընկերութիւնը» և նորանից գործ է պահանջում և ոչ թէ յիմար չմեական ցերեմոնիաներ, ինչպէս հանդիսի օրը, Հաճի յետոյ հանդէսը վերջացաւ և մեր «Մ. ընկերութիւնը» մնաւ իր տան և եօթերորդ տարվայ անգործունէութեան չրջանը։

Ա. Մովսէսեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Յունիսի 14

«Մշակ» լրագրը կենսական խնդիրներից մէնը համարել է և համարում է մեր կանանց խնդիրը։ Թէ առաջորդող յօդուածներով և թէ զանազան գաւառներից նամակագրութիւններով «Մշակը» ընթերցողները կարդացել են ծանօթանալու հայուհիների դրութեան հետ։ Աւելորդ չէր լինի ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին և Ախալքալաքի հայուհիների հետ։

Թող ներեն ինձ Ախալքալաքի հայուհիները, եթէ նա նրանց լաւ յատկութիւնների հետ ցոյց տամ և վատ կողմերը, այն յոյսով, որ այդ վատ կողմերը շուտով կարող են ոչնչանալ և փոխանակվել լաւ յատկութիւններով։

Տեսնենք թէ՝ Ախալքալաքի հայուհի-տիկինը ինչ է ընտանեաց մէջ։ Մեր հայուհի-ատանիկինը իր պարտականութիւններից ամենագլխաւորը համարում է իր տունը մաքուր, իստակ պահել։ Նա ոչ թէ միայն սրբում և աւելում է իր տունը, այլ լուանում և քերում է բոլոր կեղտերը։ Ցիանիկի յատկութիւն։ Բայց նայեցէք ուշադրութեամբ նրա հագած չորերի վրա, նայեցէք նրա որդոց վրա, կը տեսնէք սարսափելի հակապակեր։ Ինքը, այդ իստակութիւն տիրոջ տանտիկինը, բաւական չէ որ փսեցնում է իր չորերը կեղտի մէջ, բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում իր որդոց իստակութեան վրա։ Նորա որդկերանց վրա կը տեսնէք կեղտոտ պատռուած չորեր, երբէք չը սանդրած մազեր, անլուսաց երես, կեղտոտ, սեռցած ձեռքեր և իրրև այս անմաքրութեան պակ՝ անթիւ միջատներ։ Որքան անուշադրութիւն, ինչպիսի հակապակեր։ Ո՞վ կարող է հաւատալ, որ այսպիսի կեղտոտ տղաները ազնուի մաքրութիւն տիրոջ տանտիկինով որդիք լինեն։ Այս երևոյթը մի զարմանալի բան է, մինչև անգամ անհաւատալի, բայց դժբաղդաբար ճշմարտութիւն է...

Ախալքալաքի հայուհի-տանտիկինը ըստ երևոյթի լաւ մայր է. սիրում է իր որդոց, կերակրում է նրանց, երբ քաղցած են, տաք չորեր է տալիս, երբ մրսում են. երեխայի անկողնի մօտ անքուն գիշերներ է անցնում, երբ նա հիւանդ է... և այլն և այլն։ Շատ լաւ է. ի հարկէ՝ մայրը պիտի հոգայ իր որդոց համար։ Բայց տեսնենք թէ՝ մայրը ինչ միջոցներ է գործ դնում իր որդուն բարոյապէս կրթելու կամ անբարոյականութիւնից ազատ պահելու համար։ Երեխան իր մօր ներկայութեամբ զանազան հայհոյանքներ է գործածում,—մայրը ասում է. ոչինչ, կը մեծանայ, կը խելքանայ։ Որդին զուրսը, փողոցում անբարոյական տղաների հետ խաղում է, ամբողջ օրեր նրանց հետ անցկացնում, մինչև անգամ նրանց հետ խաղալու համար ուսումնարանից յետ ընկնում,—մայրը ասում է. «մանչը ասոր չատ խաղաց, ամեն օր վարժատուն կերթայ՝ ըչար ասոր մի օր մը խաղայ»։ Որդին գնում է ձորերը զբօսնելու և հարեցողութեան ու կռիւների ակամայ վկայ դառնում,—մայրը բոլորովին անվրդով ասում է. «մանչը ասոր գնաց ձորը, պրոստի կրա»։ Վերջապէս որդուն կարում, ցեխոտված, ալանդակված բերում են տուն,—մայրը ասում է... Բայց ինչ կարող է ասել տղոյմէն։ Նա չատարում է հանել իր որդու չորերը, սրբել նրա երեսից և ձեռքերից ցեխը և պատկեցնել նրան անկողնի հանգստանալու։ Մի օր կը տրտնջայ մայրը, կը ցաւի, բայց յետոյ նայելով անուշադիր է դէպի իր որդու բարոյականութիւնը, ինչպէս որ առաջ... Մեր Ախալքալաքի մայրերը այնքան չեն հասանում կամ չեն կամենում հասկանալ, որ բաւական չէ երեխային տաք հագցնել և կուչտ կերակրել՝ հարկաւոր է նրա բարոյականութիւնը պահպանել։

Ախալքալաքի հայուհի-տանտիկինը լաւ անտանասդէտ է։ Նա իր տան համար կը պատրաստէ բոլոր հարկաւոր ուտեղեղէններ և խմիչքներ, նա ինքը կը լուանայ՝ թէ իր, թէ իր երեկի և թէ որդոց չորերը. ինքն է տան մէջ աղախին, ինքն է խոհարար,—բայց որքան չասչութիւն տանտիկնութիւնների ժամանակ, որքան անտեղի ծախսեր ինչոյ-ինչերի ժամանակ, որքան աւելորդ, անպէտ, անշնչատակ պղպղուն զարդեր կան նրա վրա... Ինչ անես, սովորութիւն է. ասա նրանց արգելացուցիչ խօսքերը։

Ախալքալաքի հայուհին—թէ տիկին և թէ օրիորդ—որքան հանգստ է և խոհեմ երկի մարդկանց ներկայութեամբ, այնքան բամբասող է և զրպարտող կանանց չրջանի մէջ։ Այս ինչ խանումը այն ինձ հաշի-Արլպից զարդեր ուզեց. միւս օրը կը տարածվի թէ՝ գողացաւ։ Մի հարս մի խանումի ձեռքը պագեց, նոյն օրն և եթ կը տարածվի թէ՝ ապտակ զարկից։ Մի օրիորդ գնաց իր ծանօթի կամ բարեկամի տունը, միւս օրը այդ խեղճ օրիորդին պակասում են, և այլն...Միով բանիւ, երբ հաւաքվեցան երկու, երեք կին միասին, բաղդաւոր է նա, ով ազատ կը լինի այդ ժամանակ նրանց չիշողութիւնից։

Ախալքալաքի հայուհին գիտէ որ մաքրութիւնը անհրաժեշտ է, բայց չը գիտէ զարմանալի թէ՝ ինչպէս պահպանել այդ մաքրութիւնը։ Նա զգում է որ ինքը մայր է, գիտէ որ հարկաւոր է խնամատարութիւն իր որդկերանց վերաբերութեամբ, բայց այդ խնամատարութեան միա պարզ հասկացողութիւն չունի. նա իրրև մի անասուն կերակրում է իր որդուն, պահպանում է, դգվում ու փաղաքշում, բայց մարդկութեան յատկացած բարեական խնամատարութիւն չը կայ նրա մէջ։ Նա գիտէ որ անասնութիւնը հարկաւոր է, բայց չը գիտէ երբ և ինչպէս այդ անասնութիւնը գործ դնէ.... Այսպէս, մեր Ախալքալաքի հայուհին մի էակ է, որ թէև ունէ բանական խելք, թէև ունէ իր մէջ մարդկութեան բնականապէս յատկացած բոլոր լաւ կողմեր, բայց չը գիտէ օգտվելիլ թէ ինչպէս և գործ դնէ իր մէջ եղած լաւ յատկութիւնները։ Ցոյց՝ տուեցէք նորան միջոցներ, նա իր բնական խելքի ուժով չուտով կը մտնէ, կը հասկանայ ձեր ցոյց տուած միջոցները։ Բայց գործի ժամանակ ձեր ցոյց տուած միջոցները կը մնան կրկին անիրագործելի։ Ինչու, որովհետև նա, մեր հայուհին, չունէ ազատ կամք. նա բոլորովին չէ կարող թոյլ տալ թէ՝ ինքը ունէ իրաւունք ազատ կամքով և սեպական համոզմանց համաձայն գործելու. նա մի գործիք է իր երկրի համար. նա նրա ստրուկն է։ Երկրին էլ տգէտ և անկիրթ լինելով, պարզ բան է, տգիտութեան մէջ կը պահէ և իր կնոջը։ Երկիր իր կնոջ ամեն մի քայլը աչքատակ է վատ մնկնել, իր կնոջ իւրաքանչիւր շարժուձէից վատ հետևանքներ է ասում այնտեղ, նա չատ կասկածոտ է.—պարզ բան է, նա իր կնոջը սարկացնելու պիտի ասեսցի Հատատամ այս իմ տասածները փատտով. վերջին ժամանակ, շնորհիւ մի քանի բարեմիտ տիկնանց, որոնք, կարելի է ասել, մի բացառութիւն են կազմում այստեղ, տեղոյն օրիորդաց ուսումնարանում բացվեցաւ կանանց ընթերցարան։ Չը նայելով որ չատ կանայք գրվեցան այդ ընթերցարանին անդամ, նրանցից մի տասնորդականը հաճախ այցելում է այժմ։ Այս երևոյթի պատճառն է նրանց տգէտ երիկների և զրպարտների այդ ընթերցարանի նպատակը զկալի չար մտկները։ Գանվեցան մի քանի անձինք, առաջաւոր արժանապատիւներից, որոնց կանայքը չը նայելով որ ընթերցարանի հիմնվելու օրից գրվել են անդամ և մնալ են մինչև անգամ անդամակցութեան փողը,—մինչև այսօր մի անգամ չեն այցելել ընթերցարանը. չեն գնացել մինչև անգամ տեսնելու թէ՝ արդեօք ինչ բան է այդ ընթերցարանը—ուսելու է թէ խմելու... Երևմն պէտք է ենթադրել թէ՝ մեր Ախալքալաքի հայուհիներին տգիտութեան մէջ պահողները, նոցա ազատ կամք և ինքնուրոյն գործունէութիւն սանկոլոս անողները—նրանց երկիրներն են, որոնց հաշվում կարելի է գտնել և չատ տեղացի ազատներին։ Թող լաւ իմանան այդ երկիրները, որ եթէ իրանք ունենային զարգացած և կրթված մայրեր, իրանք այդպէս տգէտ և անկիրթ չէին լինի։ Թող լաւ գիտնան նրանք, որ որքան հարկաւոր է ուսումնարանական կրթութիւնը, տատանապատիկ աւելի հարկաւոր է ընտանեկան կրթութիւնը և դաստիարակութիւնը, որի ներկայացուցիչը իւրաքանչիւր տան մէջ պիտի լինի անշուշտ տանտիկին, մայրը, և հետևաբար՝ որքան զարգացած է այդ մայրը, այնքան ընտանեկան կրթութիւնը յաջող կը լինի....

* * *

ՆԱՄԱԿ ԴԶԱՌԻՑ

—

Յունիսի 20-ին

Ուղարկում եմ 85 բուբլի, որը ժողովեցի Ղազարի մէջ յօգուտ Վանի սովելոց։ Ինդրում հասցնել ազ հարկն է և տպագրել Նուիրատուների անունները։

Ցուցակ Նուիրատու անձանց. Խորէն քահանայ Ղազարենանց 3 ր., Գէորգ Սարկ. Աբրահեանց 3 ր., Տիկին Մարիամ Աբրահեանց 2 ր., Շուշանիկ Ղազարենանց 2 ր., Եղիշէ Թասարբեկեանց 2 ր., Թորոս Մեհրաբեանց 3 ր., Յովսէփ Լեղէմուրեանց 2 ր., Պետրոս ամն 1 ր., Յովհաննէս Աստուածատուրեանց 1 ր., Դաւիթաբէ Կօրանիդէ 1 ր., Աւէտքանար Հալլ 2 ր., Տիկին Եաբլիկեանց 1 ր., Հաստրանում Մակարեանց 1 ր., Յովհաննէս Ղամբարեանց 2 ր., Յովհաննէս Սուտիսեանց 2 ր., Ա. Խաչատուր քահանայ Աստուածատուրեանց 1 ր., Հայրապետ Սիմոնեանց 50 կ., Յովհաննէս Մեհրաբեանց 6 ր., Մկրտիչ Ջանֆիզաղեանց 1 ր., Աչակերտ Գասուբեանց 1 ր., Աչակերտ Նարիմանեանց 1 ր., Աչակերտ Սաֆարեանց Վ. 1 ր. 50 կ., Աչակերտ Սաֆարեանց Կ. 1 ր. 50 կ., Աչակերտ Հալաեանց 1 ր., Աչակերտ Վարտանց 1 ր., Աչակերտ Սարգսեանց 50 կ., Եղբարք Բարեյանեանք 10 ր., Կարապետ Մանուկեանց 3 ր., Տիկին Թամար Կանֆանեանց 10 ր., Տիկին Եւայ Գալեանց 3 ր., Օր. Մարիամ Արէչեանց 1 ր., Օր. Շուշանիկ Արէչեանց 1 ր., Օր. Եղիսաբէթ Բարեանց 1 ր., Օր. Կատարինէ Երուսալեմկի 1 ր., Օր. Մարիամ Մեհրաբեանց 1 ր., Օր. Եղիսաբէթ Եղիազարեան 1 ր., Աչակերտուհիք Ղազարի հայոց